

կրգնէ, ու իր ձեռքին արդիւնքովն այն երկիրը կըլեցընէ : Մէջքը գօտի կապած, բեւերը սօքտած կաշխատի, վասն զի աշխատանքին անոյշ համը առեր է. իր ճրագը բոլոր գիշերը կըվառի ու չմարիր : Ձեռքը անդադար աշխատութեան հետ է, մատուրներն ալ առանց ձանձրանալու իլիկ կըդարձընեն : Ձեռքը բաց է աղքատաց ողորմութիւն տալու, եւ իրեն արդիւնքէն տնանկին ալ բաժին կըհանէ : Էրիկը դուրս տեղ մը ուշանալու ալ ըլլայ՝ տանը համար ամենեւին հոգ չընէր : Բոլոր իր տնեցիքը երկերկու ձեռք հագուստ ունին : Էրկանը համար ագնիւ ու բարակ կտաւ եւ ծիրանի պատրաստեր է, իրեն համար ալ վերարկուներ : Ամենքը մատով կըցուցընեն անոր երիկը դռներուն մէջ, այսինքն երբոր իր երկրին ծերերուն եւ ուրիշ պատուաւոր բնակիչներուն հետ ժողովքի նստած ըլլայ : Կտաներ գործեր ու վերարկուներ շինէր՝ Քանանացոց կըծախէ : Բերանը չափով ու խելացի խօսքերով կըբանայ, խօսքերուն մէջն ալ գեղեցիկ կարգ մը դրած է : Ոյժն ու մեծվրայեղուիւնն իրեն հագուստի պէս եղած են, ու կենացը ետքի օրերն ուրախ պիտի ըլլայ : Իր տանը ամէն ճամբաներն ալ գոց ու զգուշաւոր են, եւ ոչ երբեք պարապ կենալով հաց կուտէ : Ըրած ողորմութիւններովը զաւկընէրն աղէկ կըմեծնան. երիկն ալ կըգովէ զինքն ու կըսէ .

« Շատ աղջիկներ հարստութիւն դիգեր ու մեծցեր են, բայց դու ամենէն ալ վեր անցար : Փուճ զարդարանք ու գեղեցկութիւն չկայ վրադ. վասն զի խելացի ու բարեպաշտ կիին օրհնենք կըլսէ, ինչպէս որ ինքն ալ երկիւղած մարդիկը կըգովէ : Իր շրթանց պտուղը տուէք իրեն, ու երիկն ալ դռներուն մէջ գովեցէք. վասն զի ամէն բանի մէջ երիկը կնոջը ճամբայ պիտի ցուցընէ, եւ ինչուան ետքը յաջողութիւն պիտի գտնեն : »

Այս փառաւոր գովեստից բոլորովին արժանաւոր կըլլային մեր ազգին տանտիկին խարունները թէ որ քիչ մը աւելի դաստիարակութիւն ու գիտութիւն ունենային :



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆ.

Մեր օրերը շատերն ռոսոսիւր ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ հետ կըշփոթեն, որ իրարմէ բոլորովին տարբեր բաներ են :

Լեզուագիտութիւն, պատմութիւն, գիտու-

թիւնք, օրենսգիտութիւն եւ ուրիշ որ եւ իցէ բան որ գրքերէ կըսովրինք՝ ռոսոսիւր կըսուին : Իսկ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ կըսովրեցընէ կրօնք, բարոյական, գաշխարհ ու ինքզինքը ճանչնալ եւ ուրիշի հետ վարուիլ : « Գիտութեանց ամենէն դժուարն ու ամենէն օգտակարը այս է, եւ սակայն ամենէն քիչ ասոր վրայ փոյք կըտանին մարդիկ » կըսէ Ռոյէն : Ասիկայ ձեռք բերելու համար հարկաւոր չէ աչքին առջեւ ունենալ ոչ բառգիրք, ոչ աշխարհացոյց տախտակներ, ոչ երկնագունտ եւ ոչ չափագիտական ձեւեր, այլ բարի խրատներ ու մանաւանդ բարի օրինակներ :

Հիմա դպրոցներու մէջ ուսում միայն կայ, այն ալ ամենուն մէջ չկայ. անոր համար ծնողաց կիցնայ որ իրենք իրենց զաւակաց դաստիարակութիւն տան : Երանի այն տղոց որ լաւ ապրելու համար հօրերնուն ու մօրերնուն կենացը հետեւիլը բաւական է իրենց :

Այս բանիս համոզուած են նաեւ Փարիզու Հայկազեան Վարժարանին վերատեսուցները, եւ ամէն ջանք կընեն եւ պիտի ընեն միշտ որ նոյն վարժարանին ընտիր ու սակաւագիւտ ձիրքերէն մէկն այն ըլլայ, որ գիտնայ ուսման հետ անբաժանելի կերպով միացընել դաստիարակութիւնը. վասն զի առանց հոգւոյ եւ սրտի կրթութեան որ դաստիարակութեան քաղցրահամ պտուղն է, մտքի կրթութիւնը մեծ արդիւնք մը չկրնար ունենալ :

ԹՈՒՉ ԱՍՏՂ ԿԱՄ ԱՍՈՒՊ.

Թուիչ աստղ կամ Ասուպ (étoile filante) կըսուին այն լուսաւոր մետեորաներկամ օդերեւոյթներն որ պարզ գիշերները շատ անգամ երկինքը կըտեսնուին ու երկնքէն վար ընկած աստղի պէս կերեւան աչքերնուս : Կըկարծուի թէ մոլորակային փոքրիկ մարմիններ են ասոնք, որ արագութեամբ մեր մթնոլորտէն անցած ատեննին օդուն հետ շփուելով կըբռնկին. եւ երբոր մեր մոլորակին այսինքն երկրիս ձգողութեանը չկարենան յաղքել, վար կիյնան ու օդաքար կամ շանթաքար (aérolithe) կըսուին :

Թուիչ աստղերը երբեմն մինակ կիջնան, եւ երբեմն բազմութեամբ մեկտեղ : Թեպէտեւ ընդհանրապէս տարուան մէջ ամէն ատեն կերեւնան, բայց նոյեմբերի 13ը եւ օգոստոսի 10ը ամենէն աւելի բազմաթիւ երեւցած ժամանակներն են. սակայն Պ. Քուլվիէ-Կրավիէ գաղղիացին որ շատ տարիներէ ի վեր անձանձիր հրային մետեորա-



ները դիտելու հետ է, կըսէ քէ հիմա նոյեմբերի 15ին առաջուան չափ ասուպ չերեւնար : Այս կարծիքն է նաեւ Պ. Պապինէ Փարիզու անուանի աստեղաբաշխը :

ԵՐԿԱՅՆԱԿԵԱՅ ՄԱՐԳՈՒ ՆԿԱՐԱԳԻՐ.

Հոջակաւոր Հուֆլանտ գերմանացի բժիշկը, որ 1856ին մեռած է, այսպէս կըստորագրէ երկայնակեաց մարդը :

Հասակը միջակ եւ բարեձեւ . դեմքը ոչ այնչափ գունաւոր, վասն զի դեմքին շատ գունաւոր ըլլալը, մանաւանդ պզտիկութեան ատեն, նշան է սակաւակեցութեան . մազերը աւելի խարտեաշ քան քէ սեւ . մարմնոյն մորթը պինդ՝ առանց կարծր ըլլալու . գլուխը միջակ մեծութիւն ունի . անդամներուն վրայ երակները որոշ կերեւան . ուսերն աւելի կտրած են քան քէ տափկած . վիզը շատ երկայն եւ փորը շատ դուրս ընկած չեն . ձեռուները խոշոր են՝ բայց խորունկ ակօսներ չունին . ոտուրներն աւելի լայն են քան քէ երկայն, եւ սրունքը գրեթէ կտր . կուրծքը լայն ու կամարածեւ . ձայնը զօրաւոր եւ քաջանչոյ . երկար ատեն շունչը կրնայ բռնել առանց նեղութեան : Ընդհանրապէս բոլոր անդամոցը մեջ կատարեալ ներդաշնակութիւն մը կըտիրէ . զգայարանքը առանց շատ փափուկ ըլլալու դիւրագգած են . երակին զարնուածքը ծանր եւ միակերպ :

Ստամոքսը զօրաւոր է, ախորժակը բաց եւ մարսողութիւնը դիւրին : Սեղան նստած ատենը վրան ուրախութիւն մը կուգայ . ամեն կերածէն համ կառնու . անոր համար ալ կերակուրի ժամին մօտենալը սիրով կըլիշէ : Ծանր ծանր կուտէ, ջուր քիչ կըխմէ, վասն զի շատ ջուր խմելը աղեաց բորբոքմանը նշան է :

Ընդհանրապէս քաղցրաբարոյ է, կերպը սիրելի, բնութիւնը հաղորդական, ուրախ, զուարթ, դիւրաւ կըսիրէ ու կըլուսայ . յիսակայութիւն, ատելութիւն եւ բարկութիւն հեռու են իրմէ : Կիրքերը միշտ մեղմ են . քէ որ յանկարծ բարկանայ նէ ալ, ամենեւին չվնասուի, որովհետեւ օգտակար տաքութիւն մը, շինծու ջերմ մըն է այն եւ ոչ քէ դառնութիւն եւ յուզումն մաղձի : Միշտ զուարճալի բաներու վրայ կուգէ մտածել, բնութիւնն ու ընտանեկան կեանքը շատ կըսիրէ : Փառասիրութիւն եւ ազահորիւն ինչ ըսել է չգիտեր . եւ երկրորդ օրուան պատահելիք բաներուն վրայ

շատ չմտածեր, որպէս զի նոյն օրուան ուրախութիւնը չայլայլի :

ՇԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՌԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ.

Շան օգտակարութեանն ու հաւատարմութեանը վրայ Փարիզու Սիէքլ օրագրոյն մեջ հետեւեալ պատմութիւնը կըկարդանք :

« Պ. Կարոյոս Լ..., մէկէն 520 ֆրանք առնելիք ունէր, եւ քանի քանի անգամ գնացեր ստակն ուզեր ու միշտ սնոտի խոստմունքներով ձեռնունայն ետ դարձեր էր : Թր մըն ալ վերջի աստիճանի կարօտութենէ ստիպեալ նորէն կերբայ որ ստակն ուզէ . եւ ինչ մեծ ու անակնկալ կըլլայ ուրախութիւնը երբոր պարտապանը կըհանէ մէկէն ձեռքը 500 ֆրանքնոց բուդը մը եւ 20 ֆրանքնոց ոսկի ձեռքը կըղնէ : Թուղքը դրամանոցին մէջ կըղնէ, բիկնոցին գրպանը կըխորէ, ոսկին կըփոխէ՝ մանր ստակ կընէ եւ ճամբան որջափ աղքատ որ հանդիպի՝ ամենուն բան մը կուտայ : Ուշ ատեն այսպէս ուրախութեամբ շուտ շուտ քայելու ժամանակ որպէս զի բոլորովին մուրը չկոխած տուն հասնի, վասն զի տունը Փարիզէն դուրս է եղեր, տէրը կորսնցուցած տղամարաւ սովալլուկ շուն մը քովը կուգայ ու չորս դին ցատքըտելով խեղճ կըբախէ : Կըխոջայ վրան Պ. Կարոյոս, կըբռնէ կըշոյէ գայն ու հետը կառնու որ տուն տանի :

Ճամբան միտքը կուգայ որ կինը կենդանի չսիրեր, ուստի եւ իր հիւրը շատ սիրով պիտի չընդունի . բայց որովհետեւ մուրը կոխեր էր, միտքը կըղնէ քէ կրնայ առանց կեկանը ցուցնելու շունը ներս տանիլ, եւ կամաց կամաց անոր միտքը համոզել որ անտէր խեղճ շունը դուրս չընէ : Բայց տուն կըմտնէ չմտներ, կինը շունը կըտեսնէ ու կըսկսի երկանը երեսն ի վեր պոռալ կանչել որ զիտէ քէ շուն չսիրեր, ինչո՞ւ առեր հետը բերեր է : Խեղճ մարդը կըջանայ ինքզինքը արդարացունել, եւ անոր բարկութիւնը իջեցընելու համար « Ձեա գիտեր, հինգ հարիւր ֆրանք բերի քեզի կըսէ » եւ ձեռքը ծոցը կըխորէ որ դրամաբուդը դուրս հանէ ցուցընէ . գլխուն ձիւն կուգայ երբոր կընայի որ գրապանակը (ճըգտան) ծոցը չկայ, ճամբան ընկեր է :

Այն կորստեան վրայ աւելի կըկատողի կինը, դառն խօսքերով երկանը անհողութիւնը երեսը կըզարնէ, եւ տեսնելով որ շունը անկիւն մը քաշուած անձայն կեցեր կընայէր, վրան կըյարձակի